ՎՃՌԵՑ

1. <<ԱՎԵՏԻՍՅԱՆ ՇԻՆ ՄՈՆՏԱԺ>> ՍՊԸ-ի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ <<ԱՎԵՏԻՍՅԱՆ ՇԻՆ ՄՈՆՏԱԺ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Երևանի քաղաքապետի 27.12.2022 թվականի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցը բավարարել.

1.1. անվավեր ճանաչել <<ԱՎԵՏԻՍՅԱՆ ՇԻՆ ՄՈՆՏԱԺ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Երևանի քաղաքապետի 27.12.2022 թվականի որոշումը:

2. Երևանի քաղաքապետարանից հօգուտ <<ԱՎԵՏԻՍՅԱՆ ՇԻՆ ՄՈՆՏԱԺ>> ՍՊԸ-ի բռնագանձել 50 000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով համարել լուծված:

4. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 16.05.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև վճռի փաստացի կատարումը:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

6. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Digitally signed by OHANYAN ARMAN 4014820192 Date: 2023.07.10 16:40:04 AMT Ա. ՕՀԱՆՅԱՆ